ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

Նախագիծ

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Արմենիա» հեռուստաընկերությամբ հեռարձակվող «Կույր աշխարհ» հեռուստասերիալի դեմ բողոքի (դիմող՝ Զարուհի Հովհաննիսյան) վերաբերյալ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը 2022 թ. սեպտեմբերի 9-ին ստացել է իրավապաշտպան Զարուհի Հովհաննիսյանի բողոքը «Արմենիա» հեռուստաընկերությամբ հեռարձակվող «Կույր աշխարհ» սերիալի վերաբերյալ, որում, մասնավորապես, նշվում է.
«Արմենիա» հեռուստաընկերությունը սկսել է հեռարձակել հերթական սերիալը, որը շարունակում է հղփացած, բիրտ ու բռնարար, անշնորհք բառապաշարով տղամարդկանց և որբ, դժբախտ, բամբասկոտ, անվերջ բռնության ենթարկվող կանանց կերպարային մոդելների վերարտադրությունը: … Անընդունելի է կուսության թեման վերստին դարձնել մեր հասարակության կարևորագույն, անկյունաքարային արժեքներից մեկը, որը, իբրև թե «արդարացիորեն», հանգեցնում է կանանց նկատմամբ բռնության սիստեմատիկ դրսևորումների»:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ուսումնասիրել է բողոքի էությունն ու ներկայացված դրվագները և ընդունում է իրավապաշտպանի մտահոգությունները: Դիտորդ մարմինն իր հերթին հաստատում է տասնամյակներ շարունակ ցուցադրվող հայկական հեռուստասերիալների ակնհայտ ցածրորակությունը, որը մասնագիտական գիտելիքների, հմտությունների և ռեսուրսների անբավարարության արդյունք է:

Դիտորդ մարմինը հարկ է համարում նշել, որ «Արմենիա» հեռուստաընկերությունը, որպես հեռարձակող ԶԼՄ, բավարար չափով հաշվի չի առել «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի Հոդված 57-ի 12-րդ կետը, որով սահմանված են *«…ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների* ***եթեր հեռարձակման պահանջները****»:*

Առավելևս, որ նախկինում եղել է նախադեպ, երբ Հեռուստատեսության և

ռադիոյի հանձնաժողովը մեկ այլ հեռուստասերիալի հեռարձակման փաստով «Արմենիա» հեռուստաընկերությանն արդեն տուգանել էր նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով։

Դիտորդ մարմինը նույնպես խիստ մտահոգիչ է համարում «Կույր աշխարհ» հեռուստասերիալում պատկերված հերոսների գործողությունները, մոտիվացիան, խոսելաոճը։ Դրանք հեռուստադիտողի մեջ առավելապես ամրագրվում են որպես «ընդունված» վարքագծային մոդելներ և երբեմն ավելի մեծ ազդեցություն են ունենում, քան ֆիլմի սցենարում առկա դրական ուղերձները։

Ըստ ԴՄ կանոնադրության՝ Դիտորդ մարմինը քննում և արձանագրում է միայն լրագրողական էթիկայի խախտումները և իրավասու չէ գնահատել գեղարվեստական ստեղծագործության որակը, օգտագործված արտահայտչամիջոցների, ռեժիսորական լուծումների և դերասանական խաղի էթիկան։

Այդուհանդերձ, հաշվի առնելով որ տվյալ սերիալը հեռարձակվում է հանրային մուլտիպլեքսում հանրապետական սփռման սլոթ ստացած լրատվամիջոցով, «Արմենիա» հեռուստաընկերության ուշադրությունն ենք հրավիրում մասնագիտական էթիկայի այն սկզբունքի վրա, ըստ որի՝ անհրաժեշտ է նրբանկատություն դրսևորել երեխաների մասին կամ նրանց մասնակցությամբ դրվագներ նկարահանելիս, հատկապես երբ դրանցում կան բռնության ու անհանդուրժողականության տեսարաններ։ Պետք է նաև բացառել սեռական խտրականության, կանանց նկատմամբ նախապաշարված վերաբերմունքի դրսևորումները։ Սրանք պարտադիր պահանջներ են ցանկացած ստեղծագործական աշխատանքի համար և ներառված են մասնագիտական էթիկայի կանոնագրերում, այդ թվում Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրում։

Դիտորդ մարմինն ընդգծում է, որ խոսքը չի վերաբերում բռնության, դաժան վերաբերմունքի պատկերներից և այլ զգայուն թեմաներից ու տեսարաններից առհասարակ հրաժարվելուն։ Պարզապես, դրանք պետք է մատուցվեն գեղարվեստական կանոններով և հնարքներով, այնպիսի հմտությամբ, որ բռնությունը մեխանիկորեն էկրան բերելու կարիք չլինի։

Ցավոք, դա առայժմ շատ հազվադեպ է հաջողվում հայաստանյան սերիալների ինդուստրիային ընդհանրապես։

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հեռարձակող լրատվամիջոցներին կոչ է անում զերծ մնալ ամեն գնով բարձր դիտողականություն ապահովելու գայթակղությունից, առաջնորդվել բացառապես հանրային շահերով և գեղարվեստական բարձր չափանիշներով։

Ընդունվել է 2022թ. նոյեմբերի 9-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ, Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի տնօրեն
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության

գործադիր տնօրեն

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ, Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: